

1867ին անգլիացիները խնդիր ունենալով Հապէշխտանի Թէոդորոս Բաբին հետ, վերջինս բանտարկել տուած էր Հապէշխտան գտնուող անգլիացիները, և ասոնց կարգին՝ տեղւոյն անգլիական հիւպատոսը: Անգլիոյ կառավարութիւնը վախնալով որ ասոնք սպաննուին, նախ քան տեղւոյն վրայ զինուորական միջոցներ ձեռք առնելը՝ զիմած էր Տ. Եսայի պատրիարքին, որպէս զի առաքելութիւն մը ղրկելով Հապէշխտան՝ ամէն ջանք ի գործ դրուի այդ անգլիացիներուն ազատ արձակումը ձեռք բերուելու և կամ գոնէ կեանքերնին խնայուելու համար:

Սոյն առաքելութիւնը, որ կազմուած էր Տ. Սահակ արքեպիսկոպոսէ, Տ. Տիմոթէոս վարդապետէ և Եղեկիէլ անուն միաբանէ, մեկնեցաւ Երուսաղէմէն 13 Ապրիլ 1867ին: Առաքելութիւնը երկու տարի մնաց Հապէշխտանի մէջ և ենթարկուեցաւ ամենամեծ դժուարութիւններու և տառապանաց՝ պատերազմի մէջ գտնուող այս երկրին մէջ: Եղեկիէլ միաբանը չը կարենալով առկալ այդ տառապանքներուն՝ վախճանեցաւ: Իսկ Սահակ արքեպս. և և Տիմոթէոս վրդ., անգլիական բանակի Հապէշխտան մտնելովը յաջողեցան ազատիլ աբկից և վերագառնալ Երուսաղէմ: Բանտարկուած անգլիացիներուն կեանքը փրկուած էր:

Իրրե շնորհակալութիւն մատուցուած սոյն ծառայութեան, Անգլիոյ Թագուհին 1869 Դեկտեմբերին Եսայի պատրիարքին ղրկած էր վերոյիշեալ պատկերները, որոնք այդ թուականէն ցայսօր կը զարգարեն Պատրիարքարանիս գահլիճը:

Անգլիոյ Վեհ. Ճօրճ Թագաւորին դուստրը Մարի Իշխանուհին երբ անցեալ 1929 Չատկին Ս. Բաղաքս կը գտնուէր, Պատրիարքարանս այցելած և ներկայ գտնուած էր Աւագ-Հինգշաբթիի Ռտելուայի արարողութեան: Օգտուելով նորին Բարձրագատուութեան Պատրիարքարանիս հանդէպ ցոյց տուած համակրական զգացումներէն, յայտնուեցաւ իրեն, Իր Վեհափառ Հօր Մեծ-Մօր և Մեծ-Հօրը, ինչպէս նաև Իր Մեծ-Հօրը պատկերներուն շնորհուած ըլլալու պարագաները, և խնդրուեցաւ որ հաճի բարեխօսել Իր Վեհափառ Հօր մօտ, որպէս զի Ն. Վ. Ճօրճ Ե. Թագաւորին և Ն. Վ. Մէրի Թագուհիին պատկերներն ալ շնորհուին Պատրիարքարանիս:

Վեհափառ Թագաւորը ընդունելով սոյն խնդրանքը, բարե-